

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Տարւոյս փետրուարի « Զանգիսի » հետ առաջուեցաւ Յ. Բաժանորդաց Եղայարարութիւն մը, որ հրաւեր էր կարգարար ազգայնոց մասնակցել « Վիեննայի Միտիթարեան Միաբանութեան Մատենադարանին շեռագրաց ցուցակին », տպագրութեան: Ըստ ան էր Եղայարարութեան մէջ թէ գիրքը պիտի ըլլայ գրեթէ « 1000 էջ, լուսատիպ եւ գունանոր տախտակներով, սկիզբն գերմաներէն յաւելուածով », Նոյնպէս կը ծանուցուէր թէ « Խաղաքանշէր բաժանորդին օրինակները Նոյնմիջերէն կ'աղարկուի ուղղակի »:

Բայց տպագրութեան ընթացքին մէջ գրեթէ 100 ի չափ Նոր ձեռագիրներ եկան երկաթիւութեան ծաւալն ստուարացնելու, եւ գործը փոխանակ 125 մեծագիր թերթէ բաղկանալու (իր 1000 էջ), պիտի բաղկանայ գրեթէ 170—175 թերթէ (1500 էջերէ) եւ 7 տախտակէ, երկուքը գունանոր: Արդէն 135^ր թերթը տպագրուած պատրաստ է: Այս ակամայ՝ բայց բաժանորդաց համար անշուշտ ուրախելի յապաղում, կը ստիպէ զմեզ մինչեւ գալ տարւոյ սկիզբները յետաձգել գործոյն հրատարակութիւնը:

Հրատարակութեան մասնակցողաց ցուցակին վերջին մասը Նոյնի « Զանգիսի » մէջ տպուելէն ետեւ, հասան նաեւ հետեւեալք, որով Բաժանորդագրութիւնն այսուհետեւ բոլորովին կը փակուի:

86. Փրոֆ. Լ. Լիւբման

87—90. Պր. Յովակիմ Զամալպաշեան

91. Պր. Գէորգ Տէր-Աղաքան

92. Պր. Զամբարձում Առաքելեան:

Այս մասնակցողաց անուանքը գործոյն հրատարակութեան վրայ չեն տպագրուած, վասն զի այն թերթն տպուած էր արդէն երբ ասոնք մեզի հասան:

Յիշեալ ձեռագրաց ցուցակին, որ կիսով չափ ստուարացաւ այժմ, այսուհետեւ կ'արժէ Փր. 62.— = րբ. 23.— = Փլ. 30.— = մարք 50.— :

ԽՄԲ. « ԶԱՆԳԻՍԻ »

ՅԱՉԱՔԱՅԱՆ ՏԵՄՈՒԹԱՆ

Վիեննա, 30. Նոյեմբեր 1895.

Ներուպայի ամէն ղահրմեններն ալ գործունեայ շարժման մէջ էին այս ամիս տեղի ունեցած ամենածանօթ ինսիքներու պատճառաւ: Դահլիճներու նման էին թորսանները, որոնց մէջ շահադէտներու « երկայն մատերը », քանի մը միլիոններ ալ սահնցուցին իրենց անյատակ զրպանները, եւ այնպիսի դրութեան հասցուցին հրապարակը, որ կանուխ կամ անագան շատ մը վաճառատանց եւ դրամատանց սնանկութեան պատճառաւ եղան: Այս էր ներուպայի « քարեդար միջամտութեան », առաջին պտուղը: Եթէ առաջին « պտուղն », նիւթական էր, որ շատերուն համար ի կորուստ մատնուեցաւ, եկրորդն էր կենսական, որ անփոխարինելի է, եւ ազգաց պատմութեան մէջ անշնչելի նշանադրում մը պիտի դրոշմէ երուպական քաղաքակրթութեան ծակտիւն վրայ . . . :

Եթէ վերույիշեալ մեծ դէպքին վերաբերեալ հետազոտները, քաղաքական տեսութիւնները, նախօրոյումներն ի քաց առնունք, շատ քիչ քան կը մնայ այս ամիս երուպական լրագրաց մէջ, եւ սակայն հարկ է համառօտակի յիշել ուրիշ յիշատակաց արժանի դէպքերը:

Սպանիական զէնքերը փթացած կը թուին, եւ կամ Արէս երեսը դարձուցած է անոնցմէ: Մեր Սեպտեմբերի քաղաքական տեսութեան մէջ զուշակածը իրականութեան կը փոխուի: Բուքարէս յառաջադէմ կ'ըլլան եւ յաշողութիւն կը գտնեն պատերազմի դաշտին վրայ: Եւ թշուառ Սպանիա կը ստիպուի այս օրերս վերստին 20 հազար զինուոր դրել, որով մինչեւ հիմայ առաքուած զօրաց թիւն է 120.000, եւ եթէ « քարեքիչ », լրերու հաւատանք, շուտով պիտի դադրին կղզույն խռովութիւններն եւ խաղաղութիւնը պիտի հաստատուի: Ընթերցող հասարակութիւնը վարժեցաւ մանաւանդ այս վերջին ամիսները, վերապահութեամբ ընդունիլ, եւ կամ ընտա հաւատք չընծայել, պաշտօնական ծանուցմանց, եւ այս՝ ոչ

միայն Սպանիայի, այլ եւ գրեթէ ամէն տէրութեանց պաշտօնականներուն հաշար կ'արժէ:

Գաղթիս: յաղթութիւնն ի գլուխ տարաւ, Մադագասկարի մայրաքաղաքը՝ Տանանարիվը, առնուեցաւ, գաղղիական «հովանաւորութիւնը», հռչակուեցաւ քայց հիմայ յայտնի կ'ըլլայ թէ այս յաղթութիւնը շատ թանկագին եղաւ Գաղղիացոց համար, հիւանդութեամբ գրեթէ 15.000 առոյգ պատանիներ իրենց գերեզմանը գտան հոն: Գուշակեցինք թէ Հովանները պիտի չկարենան դէմ դնել գաղղիական զինուոց. քայց նոյն իսկ դարեր ետքը՝ Հովանները պիտի տուժել տան Գաղղիացոց՝ այս յաղթութիւնը:

Անտրիս-Հոնգարիս: Վիեննայի քաղաքապետին Դ^ր Լուէզերի, կայսեր կողմանէ Հնաստաւորելը, շատ յուզեց ոչ թէ միայն տեղւոյս բնակիչը, այլ նաեւ բովանդակ տէրութեան քաղաքներն ու զինուորը: Կը գուշակէին թէ «Ռուսիոյնը», եւ «Հիւրընդ», (= հրեայ) ամէն միզ պիտի թափեն, մանաւանդ օգնութեան առնելով Հունգարիոյ ներքին գործոց պաշտօնեայն՝ գՊր. Բանֆի, որ փութաց իսկ քաղաքապետին ընտրութեան նախընթաց օրն ի Վիեննա եւ իւր բոլոր ազդեցութիւնն ի գործ դրաւ արգելելու հաշար այս ընտրութիւնը: Բայց յայտնի է թէ՛ ժամանակիս պահանջումներէն յառաջ եկած այս անհրաժեշտ ընտրութիւնն, եթէ հաստատուի կամ ոչ, չի կրնար հրէից համար նպաստաւոր ըլլալ, այլ աւելի կը զրգոժ մտքերը եւ մեծ վտանգ կը սպառնայ Բաղննիի պաշտօնարանին անկմանը: Երեք նիստ ունեցաւ երեսփոխանաց ժողովը, երեքն ալ սաստիկ յուզեալ, եւ պաշտօնէից զահրեղը չկրցաւ խոյս տալ հարցապնդումներէն, քայց եթէ այնպիսի փախստի ծամբաներու դիմելով, որ այնչափ նպաստաւոր չէին, եւ երկրորդ նիստն առաջնէն աւելի անձկութիւն կը պատճառէր իրեն, երրորդը՝ երկրորդէն աւելի: Ձեռք առնուեցան բոնական միջոցներ, քայց օգնուոր... պիտի հաստատէ այս գուշակութիւնը թէ գրուած է արդէն Բաղննիի պաշտօնարանին մակտին վրայ, Մանէ, Դեկէղ, Փարէս:

Միացեալ Նահանգ: Ընտրութիւններ կը կատարուին Միացեալ Նահանգներու գրեթէ բոլոր տէրութեանց մէջ. եւ ինչպէս կ'երեւայ առավարականց տեղի կու տան այս անգամ հասարակապետականներու, որոնք ստուար մեծամասնութեամբ կը գրաւեն ամէն կողմ՝ աթոռները: Կրնայ գուշակուիլ ուրեմն թէ ապագայ զահրեղն հասարակապետական պիտի ըլլայ, եւ այս կողմնակցութեան ազդեցութեամբը՝ Ամերիկայի եւ օտար ազգաց մէջ ի կախ մնացած խնդիրներն աւելի արագ շարժում պիտի առնուն դէպ ի երեւոյ լուծումով: Եւ արդէն հեռագիրը ծախոյց թէ մեծ պատերազմիկ նաւ մը կու գայ դէպ ի Միջերկրական, միանալու համար օտար նաւատորմողներու, որոնց տարեկան շրջագայութիւններն այս անգամ ամիս մը կանխեցին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌԻՍՈՒՄԵՆԿԱՆ

ԼԵՃՈՒԿԱՐԱՆԿԱՆ — Աշխարհաքաղ լեզուի արդի վիճակը. 357:

ԿԵՆՍԱԳՐԱՆԿԱՆ — Բոլիչ Բարունակ Պէյ Բոլիկեան Փէրուսիան. 360:

ՀՆԱԳԻՏԱՆԿԱՆ — Գոյներու քաղաքութեան եղանակ ըստ Հնոց. 370:

ԳԻՏԱՆԿԱՆ — Ժննաց փիլիսոփայութեան թիւ. 371:

ԲՆԱՍՏԵՂԺԱՆԿԱՆ — Հրդեհ. 375:

ՈՒՂԵԳՐԱՆԿԱՆ — Սեւ ծովու ռուսական եզերքը. 375:

ԱԶԳԱԳՐԱՆԿԱՆ — Հայ բժշկուհի մի Վիեննա. 377:

ՄԱՏԵՆԱՌՕՍՏԱՆԿԱՆ — Նախագիտելիք ռուսարանութեան. 379:

ԱՅԼԵՔԱՅԼ

ՄԱՆԱՄԱՆՈՒԹԻՒՆ — Մուկէի ջրանցքը. 386: — Գալիշի թղթը. 386:

ՆՈՐԱՄԱՆՈՒԹԻՒՆ — Հնդկ եղեգէ շնուած նրդին մը. 386:

ՕՆԱՌՈՒԹԻՒՆ. 387:

ԲԱՆԿԱՆԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 387:



ՀՐԱՍՏԱՐԱՆԿԱՆ ԵՒ ՊԱՏԱՆՈՒՄԱՆՏՈՒՆ ԽՄԱՆԱՐ

Գ. ԱՄՓԱՅԵԼ Գ. ՊԱՐՈՆՅ

ՎԻԵՆՆԱ. ՄԻԻԹԵՐԵՆԿԱՆ ՏՊԱՐԱՆ